

ցցնել, երկրորդը՝ համարձակ իրեն եւ իւր կուսակցութեան դէմ թշնամութեան դրօշակ պարզել, ծերակոյտին եւ ժողովրդեան գլուխ անցնիլ կանգնիլ:

— Բայց այդ վերջինին համար զինուորական գոնէ փոքրիկ զօրութիւն մը ունենալու է:

— Ես էլ այդ փոքրիկ զօրութիւնը պատրաստելու վրայ եմ: Հիմա՝ այս իմ պալատիս մէջ՝ բոլոր սպասաւորք հայ փորձ զինուորներ են, երեք հարիւր մը կ'ելնեն: Այստեղ մօտ կը բնակի եւ ինձ հետ լաւ կապուած է բարեկամութեամբ Գեորգ Մագիստրոս, որու պալատը կան երկու հարիւրի չափ նոյնպէս հայ սպասաւորք. նոյնչափ մ'էլ կան Մանուէլ Արշակունուոյ՝ այդ առաքինի ծերուն ծառայութեան մէջ՝ քաջ տղամարդիկ, որ մահուանէ երկիւղ չեն ճանչեր:

— Այդ ամէնը բաւական ապահովութիւն կրնային համարուի՝ եթէ անմիջապէս բու այս պալատիդ դիմաց չի տեսնէի զինուորական նաւարանը:

— Այդ կողմէն վտանգ չի կայ, յոյն ծովապետը Վաղէնտինի ոխերիմ թշնամին է, եւ ես եմ նորա պաշտպանը կայսեր մօտ:

— Ուրեմն ինչի՞ կը սպասես, եղբայր: Գործէ՛: Զու նկարագրութենեդ ինձ այնպէս կը թուի, որ շարժուելու ժամանակն հասած է:

Այս խօսքիս վրայ սկսաւ մտածել Երիզագին, որ շատ խոհեմ մարդ էր եւ աւելի քաղաքագետ, քան թէ զինուորական:

— Բայց ես վայրկեանէ վայրկեան կը սպասեմ, որ այս մեր յոյն եղբազրք շարժմունքի սկիզբն տան, որպէսզի շարժմունքը հայկական կերպարանք չառնու, եւ իրենք թելերնին կախած մեզ միայն չի թողուն: Եւ ապահով եմ, որ սովը մէկ կողմէն, յարկաց ծանրութիւնը միւսէն խռովութեան փոթորիկ մը պիտի հանեն: Եւ ժամեժամ այդ բանին կը տպասեմ:

Հագիւ թէ այս խօսքերը զրուցեց, եւ ահա երիտասարդ մը ներս մտաւ շնչասպառ...

— Խռովութիւնն սկսաւ Ս. Սոփիա, ժողովուրդը կատաղած զանտօնիոս այրեց,— ըսաւ: